

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա Ռ ԳԱԳԻՆՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՎՈՎ ԱՆՑՅԱԼ ԴԵՐՔԱՅԻ ԿԱՌՈՒՅՑԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հին հայերենում անցյալ դերբայը հանդես է գալիս ինչպես ուղղական, այնպես էլ սեռական հոլովով ենթակայի հետ: Ընդ որում, սեռական հոլովով ենթական գերիշխում է հիմնականում անցողական բայերի հետ, իսկ ուղղականը անանցողական:

Ուշագրավ է, որ համանման հակադրությունն առկա է նաև երգատիվ լեզուներում: Միակ տարբերությունն այն է, որ եթե հայերենում անցողական բայի խնդիրը դրված է հայցական հոլովով, ապա երգատիվ լեզուներում՝ բացարձակ հոլովով: Հին հայերենի այս կառույցի ծագման և բնույթի շուրջ տարբեր կարծիքներ են եղել: Եթե փորձենք խմբավորել, ապա կարող ենք դասակարգել դրանք հետևյալ կերպ:

1. Հայերենի անցյալ դերբայը նախապես բայանուն է եղել (Ա. Մեյե):
2. Սերում է աորիստի հիմքից և նախապես գործող անձ է եղել (Լ. Սարիես):
3. Նախնական անանցողական կառույց է (Ա. Լյոնե):
4. Բխում է ունենալ բայով կազմված շրջաստության իմաստից (Յ. Լոհման և Է. Բենվենիստ):
5. Գործող անձի սեռական հոլովով դրված լինելը բխեցվում է պերֆեկտի իմաստից ուղղականի փոխարեն երկրորդաբար հանդես եկող (Կ. Տրոստ):
6. Ուշ շրջանի գոյացում է հայերենում (Ա. Ղազարյան):
7. Երգատիվ կառույց է:
 - 7.1. Երգատիվ կառույց, որը կովկասյան լեզուների ազդեցության հետևանք է (Է. Թումանյան):
 - 7.2 Երգատիվ կառույց, որը հնդեվրոպական ծագում ունի (Կ. Շմալստիգ):
 - 7.3 Երգատիվ կառույց, որն ընդհանուր լեզվաբանական բնույթ ունեցող տիպաբանական զարգացման արդյունք է (Ա. Սախոկիա):
8. Երգատիվից նովինատիվ անցման միջանկյալ փուլ (Կ. Դ. Շմիդտ):
9. Նախապես պասիվ է եղել:
 - 9.1. Անանցողական պասիվ կառույցը ներգործական բայերի դեպքում վերածվել է ակտիվի ակտիվ-պասիվ հակադրությունը պահպանելու համար (Ռ. Շտեմպել):
 - 9.2. Բխեցվում է հայերենի պասիվի անդեն գործածությունից, ընդ որում պասիվը ակտիվի շրջումը չէ, այլ պասիվի նորմալ գործառնությամբ նրա անդեն գործածությունն է, որը սկզբունքորեն չի ներառում գործող անձի լրացումներ (Յ. Վայտենբերգ):
10. Հնդեվրոպական ծագում ունի, որը բխեցվում է հնդեվրոպական շրջա-

նի համար վերականգնված նախնական սեռականի և արտոլյուտիվի (պայմանականորեն հայցական) հոլովների հակադրությունից (Յու. Գաբրիելյան):

Ընդ որում, հարկ է նշել, որ հիշյալ տեսություններից ոչ մեկն էլ լիովին լուծում չի տալիս այս կառույցի ծագման խնդրին. Այսպես դեռևս Ս. Մեյեին է պատկանում այն միտքը, որ հայերենի բայածականը ծագումնաբանորեն բայանուն է եղել [Meiller, 1903, էջ 97]: Օր. **Նորա բերեալ** է նշանակել է **նրա բերելը կա**: Մեյեի կարծիքով բայածականն ու անորոշը նախապես նույնն են եղել: Բացի այդ, նա ընդունում է հարևան հարավկովկասյան լեզուների ազդեցության հնարավորությունը հայերենի անցողական պերֆեկտային կառույցի վրա:

Մի կողմ թողնելով հարավկովկասյան լեզուների ազդեցության խնդիրը նշենք, որ անցյալ և անորոշ դերբայների նախապես նույնը չլինելու մասին են վկայում նրանց տարբեր գործառույթները, որոնցից կարելի է բխեցնել նրանց տարբեր իմաստները: Առավել ևս, որ անորոշ դերբայի նախապես բայանուն լինելու հարցը նույնպես վերջնականապես լուծված չէ: Ինչ վերաբերում է անցյալ դերբայի բայանվանական ծագմանը, ապա թերևս իրավացի է Դետերսը, որը, քննադատելով Մեյեին տարակուսում է, թե ինչու կարելի է ասել **կա իմ կրելը**, բայց ոչ **կա իմ գալը** [Deeters, 1927, էջ 80]:

Հարկ է նշել, որ մինչ օրս ընդունված է անցյալ դերբայի կազմության մասին Մարիեսի տեսակետը, որի համաձայն ***-lo** վերջածանցը միանում է – **եմ** բայերի աորիստի – **es** ածանցին, որը բխում է հնդեվրոպական ***-es-ā-**-ից [Mariès, 1930, էջ 175]: ***is-ā-lo** –ի **ā-**-ին էլ նա վերագրում է վիճակի իմաստ: Ընդ որում, նա այս կազմության աղբյուրը համարում է հենց –**եմ** (անցողական) բայերը, քանի որ միայն այստեղ են համընկնում աորիստի և բայածականի հիմքերը, ինչպես **արծակեա-ց և արծակեա-լ**: Թեև Մարիեսը բայածականի կազմությունը աորիստի հիմքից որպես նորակազմություն է դիտում հնդեվրոպական լեզուներում [Mariès, 1930, էջ 170], սակայն համանման կազմություններ կան նաև սլավոնական լեզուներում [իմմտ. Trost, 1968, էջ 91]: Բացի այդ, Մարիեսը հակասում է ինքն իրեն, քանի որ նա այս կառույցը համարում է նաև նախնական անվանական կառույց և հատկապես գործող անձ (nomen agentis), որը նա հիմնավորում է այս դերբայի անցողական բայերի հետ ունեցած վերջը նշված առնչությամբ [Mariès, 1930, էջ 175]: Սակայն, թե ինչպես են համատեղվում գործող անձի ու աորիստի հիմքի իմաստները, նա չի պարզաբանում:

Եթե Մարիեսն անցյալ դերբայը քննում է բառակազմական տեսանկյունից, ապա Ստ. Լյոնեն շարահյուսության: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ***-lo** շրջաստության անանցողական կառույցները զերակշռում են՝ նա այն կարծիքն է հայտնում, որ այս կառույցի անանցողական գործածությունը նախնական է եղել, իսկ անցողականը սերվել է նրանից [Lyonnet, 1933, էջ 68 և էջ 73]:

Լոհմանն ու Բենվենիստը անկախ միմյանցից և տարբեր ուղիներով միևնույն լուծումն են առաջարկել, այն է հայերենի անցողական պերֆեկտային կառույցը **ուճենալ բայով շրջաստության մի տեսակ** է: Ի տարբերություն Լոհմանի, որը հայերենում ենթադրում է հարավկովկասյան ազդեցություն, Բենվենիստն այն բխեցնում է հնդեվրոպական հիմքերից: Այս եզրակացությանն է նա գալիս այլ հնդեվրոպական լեզուների, ամենից առաջ հին պարսկերենի հետ համեմատությունից [իմմտ. Stempel, 1983, էջ 70]:

Հայերենի հիշյալ կառույցը զուգադրելով հարավկովկասյան լեզուների նմանատիպ կառույցների հետ, հատկապես հին վրացերենի, որտեղ անցողական պերֆեկտի գործող անձը դրված է տրական հոլովով, իսկ խնդիրը ուղղականով, Լոհմանը եզրակացնում է, որ հին վրացերենի և հին հայերենի վերոհիշյալ կառույցները սկզբունքորեն նման են, երկուսն էլ արտահայտում են ստացական իմաստ: Ընդունելով, որ հայերենի շրջասությունը նույն պատկերացումից է բխել, ինչ արևմտաեվրոպական լեզուների պերֆեկտային կառույցները Լոհմանը կարծում է, որ հայերենի կառույցը *ունիմ* բառով չի կազմվել հենց հարավկովկասյան ենթաշերտի ազդեցության հետևանքով: Ինչ վերաբերում է խնդրին, որը երկու լեզուներում տարբեր հոլովներով է դրված, ապա, ըստ նրա, նոմինատիվ լեզվում միայն հայցականը կարող էր լիարժեք ձևով վերարտադրել իրգատիվի ուղղականը [Lohmann, 1937, էջ 42–61]:

Համամիտ լինելով Լոհմանի հետ այն հարցում, որ հիշյալ կառույցը նույն պատկերացումից է բխել, ինչ արևմտաեվրոպական լեզուների պերֆեկտային կառույցները, և հիմքում ընկած է ունենալ շրջասությունը, կարծում ենք, որ այն հենց հնդեվրոպական ժազուս ունի, եթե ոչ ընդհանուր տիպաբանական երևույթ է:

Ի տարբերություն Լոհմանի, Բենվենիստը հիմնվում է այլ հնդեվրոպական լեզուների տվյալների վրա [Benveniste, 1952, էջ 52–62]: Հայերենի բայածականը, ընդ որում, դիտարկվում է որպես զուտ անանցողական կրավորական: Եվ միայն սեռական + հանգույց + անցյալ դերբայ կառույցը ստանում է անցողականության արժեք: Այդ պատճառով էլ խնդիրը հանդես է գալիս հայցական հոլովով: Որպես ապացույց նա շշտում է այն հանգամանքը, որ միջին իրանական լեզուներում, ինչպես սողդերենում և խորեզմերենում, հին իրանական *ունենալ*–ով տիպը նահանջել է: Սակայն Բենվինիստի բացատրությունը նույնպես լիովին լուծում չի տալիս հայցականով խնդրին: Քանի որ, ըստ նրա, խնդիր է համարվում առաջին հերթին բայածականը: Ինչպես իրավացիորեն նկատում է Շտենպելը, որպես խնդիր առաջին հերթին պետք է հանդես գար ոչ թե բայածականը, այլ հենց խնդիրը [Stempel, 1983, էջ 73]:

Հաջորդ տեսությունը պատկանում է Կ. Տրոստին: Աստվածաշնչի հայերեն, հին եկեղեցական սլավոներեն և հունարեն տեքստերի զուգադրությունը Կ. Տրոստին հանգեցնում են այն եզրակացության, որ հայերենում և սլավոներենում աորիստը ոչ տևական է և դիպվածային: Ըստ Տրոստի՝ սեռականով ենթական հայերենում ցույց է տալիս վիճակի պատճառը կրող անձը, և այստեղ գործ ունենք *genitivus auctoris*–ի հետ: Շարժում ցույց տվող բայերի հետ ընդհակառակը՝ ենթական և՛ վիճակի պատճառը կրող անձն է, և՛ վիճակի կենտրոնը: Ըստ նրա՝ անցողական բայերի մոտ վիճակի պատճառը առանձնահատուկ կերպով է նշվում: Բացի այդ, նա կարծում է, որ *h*– ե. *– *h* վերջածանցն արդեն կրում է վիճակի բովանդակությունը, այսինքն այն բխում է ոչ թե **is*–*s*–*h*–ի *s*–ից, ինչպես կարծում է Սարիեսը [Maries, 1930, էջ 175], այլ *h*–ից [Trost, 1968, էջ 96–97]:

Տրոստի մեկնաբանությունը նույնպես ունի իր թերի կողմերը, քանի որ *–*h* վերջածանցն ինքնին չի կարող արտահայտել վիճակի իմաստ: Այդ դեպքում անորոշ դերբայը նույնպես պետք է ունենար վերոհիշյալ իմաստը: Բացի այդ, Տրոստը չի կարողանում հիմնավորել, թե ինչու է անցողական բայերի ենթա-

կան, այսինքն վիճակի պատճառը կրողը դրված հենց սեռական հոլովով:

Սեռական հոլովով անցյալ դերբայի կառույցը հայերենում Ս. Ղազարյանը վերագրում է հայերենի զարգացման ուշ շրջանին [Ղազարյան, 1961, էջ 485]: Ըստ նրա այս կառույցում ենթակայի դերում նախապես հանդես է եկել դերբայը, իսկ բայի դերում ժամնդակ բայը: Բայց երբ ժամնդակ բայը զրկվել է ինքնուրույն իմաստից և հանգույցի դեր է կատարել, փոխվել է նախադասության գլխավոր անդամների քերականական իմաստը: Սկզբնական ենթական և ստորոգյալը միասին կազմել են բաղադրյալ ստորոգյալ, իսկ ենթակայի դերը ստանձնել է նախադասության հատկացուցիչը, որը միշտ հանդես է եկել սեռական հոլովով: Նա բերում է հետևյալ օրինակը՝ Նոցա էր փորեալս զխորխորատն: Ըստ հեղինակի նախկինում այս կառույցը եղել է Նրա փորելն է խորխորատն, որտեղ փորելը հանդես է եկել որպես ենթակա, իսկ է-ն որպես բայ: Սակայն Ս. Ղազարյանի այս մեկնաբանությունը չի հիմնավորում այն փաստը, թե ինչու է սեռականով ենթական հենց անցողական բայերով կառույցներում գերիշխում: Բացի այդ, հանգույցը միշտ չէ, որ առկա է: Եվ ուշագրավն այն է, որ այն բացակայում է հիմնականում անցողական բայերի մոտ:

Ինչ վերաբերում է հիշյալ կառույցը երգատիվ համարելուն, ապա գոյություն ունի երեք տեսակետ, որոնք միմյանցից տարբերվում են նրան վերագրվող ծագմամբ: Եթե Ղետերսը և ավելի ուշ Թումանյանը դրանք համարում են կովկասյան լեզուների ազդեցության արդյունք, ապա Շմալստիգը, այն համեմատելով լիտվերենի համապատասխան կառույցի հետ, նրան վերագրում է հնդեվրոպական ծագում: Սախոկիան, երգատիվ կառույցը համարելով ընդհանուր տիպաբանական զարգացում, անցյալ դերբայով այս կառույցն էլ դիտում է որպես հիշյալ զարգացման դրսևորում:

Է. Թումանյանը այս կառույցի նախապայման է համարում բայահիմքի սեռի տեսանկյունից չեզոք լինելը, որը չի տարբերում ներգործական և կրավորական գործողությունները և որի պատճառով ներգործականի ենթական դրվում է սեռական հոլովով: Համեմատելով կովկասյան լեզուների հետ նա տիպաբանական զուգահեռներ է գտնում մի կողմից հարավկովկասյան (քարթվելական) խմբի լեզուների, մյուս կողմից՝ դաղստանյան լեզուների և հայերենի միջև: Քարթվելական լեզուների հետ տիպաբանական նմանությունը այն է, որ թե հայերենում և թե քարթվելական լեզուներում առկա է և նոմինատիվ, և էրգատիվ կառույց: Մի երևույթ, որ հատուկ չէ մյուս կովկասյան լեզուներին՝ Բացի այդ, և գրաբարում, և կովկասյան լեզուներում էրգատիվ կառույցը սահմանափակվում է անցյալ ժամանակաձևերով: Նոմինատիվ կառույցները ավելի հաճախ հանդիպում են ներկա ժամանակաձևերում, հատկապես այն դեպքում, երբ հայերենի բայը սեռային հակադրություն չունի:

Դաղստանյան լեզուների հետ տիպաբանական նմանությունն էրգատիվ հոլովի գործառնություն սեռական հոլովի (օրինակ լակերենում) գործածությունն է: Ընդ որում, գրաբարի համար էրգատիվի գործածությունը է. Թումանյանը համարում է երկրորդական: Այսպիսով նա եզրակացնում է, որ գրաբարի այս կառույցը միջին դիրք է զբաղում հարավկովկասյան և կովկասյան մյուս լեզվախմբերի միջև. Առանձին ուսումնասիրության նյութ համարելով էրգատիվ կառույցի ծագման և տեղի հարցը գրաբարում նա, այնուամենայնիվ,

դրան վերագրում է ենթաշերտային բնույթ կամ համարում է զուգամետ զարգացման արդյունք [Туманян, 1972, էջ 959–960]:

Համամիտ լինելով է. Թումանյանի այն կարծիքին, որ այս կառույցի առաջացման նախապայմանը բայափինքի չեզոքությունն է, մենք, այնուամենայնիվ, չենք կարծում, թե դա կովկասյան լեզուների ենթաշերտային ազդեցություն կամ զուգամետ զարգացման արդյունք է:

Ըստ Շմալստիգի հայերենի *եալ*-ով բայածականի զարգացումը նույնն է, ինչ լիտվերենի *-t*-ով բայածականինը. Սկսելով որպես անանցողական բայական ձևեր, որոնց ենթական դրվել է ուղղական հոլովով նրանք ավելի ուշ վերամեկնաբանվել են որպես պասիվ, որոնց գործող անձը դրված է եղել սեռական հոլովով: Պասիվ մեկնաբանումը հետագայում փոխվել է ակտիվի, և գործող անձը մնացել է դրված սեռական հոլովով, սակայն հին ուղղականին փոխարինել է հայցականը (լիտվերենում նույնպես): Այսպիսով նա եզրակացնում է, որ հայերենն ու լիտվերենը, ինչպես և բոլոր հնդեվրոպական լեզուները, նախապես ունեցել են էրգատիվ, այսինքն գործող անձի սեռական հոլովը վրացերենի կամ այլ կովկասյան լեզուների ազդեցության արդյունք չէ: Այն ավելի շուտ հնդեվրոպական ժառանգություն է, որի հետքերը կարելի է գտնել լիտվերենում, հունարենում, հնդիրանական լեզուներում, լատիներենում, սլավոներենում [Schmalstieg, 1984, էջ 142]:

Ուշագրավ է, որ Շմալստիգը նույնպես այդ բայածներին նախնական չեզոքություն է վերագրում համարելով, որ դրանք նախապես հանդես են եկել որպես անանցողական ձևեր, իսկ ավելի ուշ վերամեկնաբանվել են որպես կրավորական, որոնց գործող անձը դրված է եղել սեռական հոլովով:

t-ով և *I*-ով բայածականների զարգացման փոխադարձ կապը չբացատրելով մեզ համոզիչ չի թվում Շմալստիգի այն կարծիքը, որ անանցողական բայերի ուղղական հոլովով ենթական այնուհետև փոխարինվել է սեռական հոլովով ենթակայով, քանի որ պարզ չէ անցման պատճառը: Ստավել ևս հասկանալի չէ, թե ինչու է սեռական հոլովով ենթակայով կառույցը հետագայում ընկալվել որպես ակտիվ: Եթե գործող անձը արդեն պասիվում դրված է եղել սեռական հոլովով²:

Համեմատելով Աստվածաշնչի հին հայերեն և հին վրացերեն թարգմանությունները ուշագրավ տեսակետ է հայտնում Ս. Սախոկիան, որն այս կառույցը համարում է ստացական և այն հանգեցնում խոր հոգելեզվաբանական արմատներին: Այսպես էրգատիվ կառույցը լայն հասկացություն համարելով նա որպես այդ կառույցի ձևաբանական–շարահյուսական իրացումներից մեկն էլ դիտում է ստացական կառույցը, այսինքն մի կառույց ենթակա–գործող անձով, որը դրված է որևէ ստացական հոլովով, այլ լեզուներում արտահայտվում է որևէ ստացական վերջածանցով:

Այսպիսով Սախոկիան էրգատիվ կառույցի առկայությունը հին հայերենում չի բխեցնում կովկասյան լեզուներից, քանի որ, ըստ նրա, այդպիսի կառույցների ի հայտ գալը և դրանց որպես էրգատիվ կառույց հանդես գալը համընդհանուր երևույթ է, և էրգատիվ կառույցը բոլորովին էլ կովկասյան լեզուների մենաշնորհը չէ: Որպես ապացույց նա վկայակոչում է նոր արիական լեզուներում հին և ավելի վաղ նախահնդեվրոպական նախատիպերի վերակազմու-

թյունների մասին [Сахокия, 1984, էջ 499]։ Ինչ վերաբերում է հայերենի հիշյալ կառույցին, ապա Մախսկիան, ցավոք, առանց հստակեցնելու, նշում է, որ գրաբարի հոլովական համակարգը թույլ է տալիս միայն սեռականի գործածությունը երգատիվ ձևի համար [Сахокия, 1984, էջ 499–500]։ Նա ցիլլային զարգացում է վերագրում այս կառույցին, որի նախատիպը (նաև հնդիրանական և բալթսլավոնական համարժեքների համար) նախահնդեվրոպական ստացական երգատիվն է ածականական բայի դեպքում։ Իր վարկածն ապացուցելու համար նա հիշատակում է այն հանգամանքը, որ Կ. Շմիդտը **Նորա գործեալ է* կառույցը ներառել է նախահնդեվրոպական բայի վերականգնման համակարգում [Сахокия, 1984, էջ 507]։

Կ. Շմիդտի կարծիքով, որը նույնպես զուգահեռ է տանում վրացերենի հետ, այս կառույցը չի կարելի համարել երգատիվ, քանի որ ուղիղ խնդիրը դրված է հայցական և ոչ թե բացարձակ հոլովով։ Ըստ նրա՝ այն միջին դիրք է զրավում երգատիվ և նոմինատիվ կառույցների միջև։ Այսինքն հակաերգատիվացման գործընթացը տեղի է ունեցել հայցականին զավելացնելով [Туманян, 1972, էջ 959–960]։

Այսինքն պետք է ենթադրել, որ Շմիդտը այս կառույցը դիտում է որպես նախնական երգատիվի զարգացման արդյունք։

Հաջորդ տեսակետի կողմնակիցները Շտեմպելը և Վայտենբերգը, փորձում են ապացուցել այս կառույցի նախապես պասիվ լինելու հանգամանքը։ Եթե Շտեմպելն այն բխեցնում է անանցողական պասիվից, ապա Վայտենբերգը անդձն պասիվից։ Ընդ որում, Շտեմպելը նույնպես պասիվից ակտիվի անցման պատճառ է համարում հայցականի ցուցիչի ավելացումը որպես խնդիր ընկալված քերականական ենթակայի վրա։ Իսկ հայցականի հավելյալ նշույթավորումը գ-ով ավելի ուշ երևույթ է, որն ի հայտ է եկել ուղղականի և հայցականի այլևս ոչ հստակ տարբերակման պատճառով (Stempel, 1983, էջ 84–85)։ Ըստ նրա բայածականի ներգործական նշանակությունը ի հայտ է եկել նախապես այն դեպքերում, երբ գործող անձը կամ ընդհանրապես չի եղել, կամ սկզբից հիմնական բայի մոտ է հանդես եկել, այնպես որ անհետանում է նաև գործող անձի սեռական հոլովի կապը հայցական հոլովով դրված խնդրի հետ, և բայածականը ինքն է ուղիղ խնդիր ստանում։ Այուս կողմից չէր կարող հրաժարվել սեռական հոլովով դրված գործող անձից, քանի որ այլապես առանց խնդրի անցողական նախադասությունը չէր տարբերվի պասիվից, օր *Նորա տեսեալ է։ Նա տեսեալ է։*

Սակայն Շտեմպելի տեսությունը չի լուծում սեռականով ենթակայի խնդիրը, քանի որ, ըստ նրա, գործող անձը կապ չունի ուղիղ խնդրի հետ և բայածականն ինքն է ուղիղ խնդիր խնդրառում։ Այդ դեպքում, ինչպես բացատրել անցողականության և անանցողականության հակադրության առաջացումը, առավել նս, որ նա առաջնային է համարում բայածականի որոշչի գործառույթը, և ինչու է ենթական հենց սեռական հոլովով դրվում։ Բացի այդ, լուծում չի տրվում նաև բայածականի անհանգույց գործածությանը։

3. Վայտենբերգը, ջննդատելով Շտեմպելին, նույնպես, ինչպես և Շմիդտը, այն կարծիքն է հայտնում, որ հայերենի բայածականը սեռային առումով չեզոք է [Weitenberg, 1986, էջ 19]։ Եվ ինչպես և Շտեմպելը, նա նույնպես անց-

յալ դերբայը բխեցնում է ածականից: Հետագա զարգացման սկզբնական տի հարցում նա հետևում է Ֆոգտին, ըստ որի դա այն իրադրությունն է, որի դեպքում և անցողական, և անանցողական պերֆեկտի ենթական դրված է սեռական հոլովով: Ստորոգծելիական (պրեդիկատիվ) պերֆեկտի շարահյուսությունը իր բացատրությունն է գտնում անվանական անհանգույց նախադասությունների հայեցակարգում: Սեռականը նախապես ներկայացրել է ստորոգծելիական ածականը [Weitenberg, 1986, էջ 18]: Ըստ նրա անանցողական բայերի դեպքում նախապես եղել է սեռականով ենթակա, որն այնուհետև դարձել է ուղղական [Weitenberg, 1986, էջ 20]: Այսպիսով հին հայերենում անանցողական բայերի դեպքում նախապես սեռականով ենթակայի հանդես գալը նա համարում է ավելի շուտ վերապրուկ, քան նորաբանություն [Weitenberg, 1986, էջ 21]: Ընդ որում, ըստ նրա, նախնական է համարվում անհանգույց գործածությունը:

Հետևելով Մելեին Վայտենբերգը կարծում է, որ պասիվը միշտ չէ, որ ակտիվի շրջումն (ինվերսիա) է, և հայերենի պասիվի նորմալ գործառույթը նրա անդեմ գործածությունն է, որը սկզբունքորեն չի ներառում գործող անձի լրացումներ, օր. թուի – ինձ թվում է: Անգամ նա ենթադրում է, որ պասիվից ակտիվ փոխակերպման պայմանները հայերենում բացակայում են [Weitenberg, 1986, էջ 18]:

Ինչպես տեսնում ենք, և Հտեմպելը, և Վայտենբերգը կարծում են, որ նախապես գործող անձը չի ներառվել, այդ դեպքում հարց է առաջանում որտեղից սեռական հոլովով ենթական, և ինչու հատկապես անցողական բայերը ունեն այդ ենթական: Անանցողական բայերի հետ սեռականով ենթակայի գործածության նախնականության հարցը համոզիչ չէ, քանի որ եթե բայածականը ինքը սեռային առումով չեզոք է, ինչպես պնդում է Վայտենբերգը, ապա անհասկանալի է անանցողական բայերի հետ սեռական հոլովի գործածությունը: Բացի այդ, այդ դեպքում կբացակայի անցողականի և անանցողականի հակադրությունը:

Այս կառույցի խնդրին անդրադարձել է Ման Յու. Գաբրիելյանը, որը, փորձելով լուծում տալ հնդեվրոպական լեզուներում հոլովական ձևերի զարգացման և ծագման խնդրին, վաղ հնդեվրոպական շրջանի համար հնարավոր է համարում վերականգնելու երկու հոլովական ձևեր սեռական և աբսոլյուտիվ (պայմանականորեն հայցական) ուղղականի առաջացումը վերագրելով հնդեվրոպական շրջանի քայքայման փուլին:

Ինչ վերաբերում է հիշյալ կառույցի մեկնաբանությանը, ապա այն թերևս հիշեցնում է է. Թումանյանի տեսությունը, որի համաձայն այն խառը էրգատիվ կառույց է: Տարբերությունն այն է, որ է. Թումանյանը այն համարում է կովկասյան ենթաշերտի արդյունք: Բացի այդ, Գաբրիելյանը խուսափում է այն անվանել էրգատիվ, քանի որ հարում է լեզվաբանների այն կարծիքին, որ վաղ հնդեվրոպական շրջանում բացակայել է բայի սեռի կարգը, որն էլ առնչվում է էրգատիվ կառույցի հետ, թեև լիովին չի բացատրում այն: Այնուամենայնիվ, նա ավելի իրական է համարում հետևյալ բացատրությունը: Այսպես նա այն կապում է հնդեվրոպական նախադասության նախնական կաղապարի, սա էլ իր հերթին ձևաբանական կաղապարի հետ: Ելնելով այն բանից, որ հայերենում գերիշխում է A+S նվազագույն ձևաբանական կաղապարը (ինչպես սևահող,

ործաքար և այլն) նա եզրակացնում է, որ վաղ շրջանի համար ոչ նշույթավորված կադապար է եղել VSO-ն: Սրանից էլ ենթադրում է, որ վաղ հնդեվրոպական շրջանին բնորոշ է եղել A+S նվազագույն կադապարը, որտեղ A-ն սեռականի ձև է, իսկ S-ն իր ունեցած ընդհանուր, վերացական իմաստի պատճառով աբսոլյուտիվի [Գաբրիելյան, 2005, էջ 88–89]: Սակայն, ցավոք, այստեղ չի հստակեցվում բայածակների դերը:

Ուշագրավ է, որ ըստ Վ. Դրեսլերի, վերականգնված հնդեվրոպական նախադասության մեջ բայը նախադաս է եղել միայն բարդ, կապակցված նախադասություններում, իսկ պարզ, ոչ էնֆատիկ, մեկուսացած նախադասություններում այն դրվել է վերջում: Ընդ որում, նշենք, որ այս վերականգնման համար հաշվի են առնվել նաև հայերենի տվյալները [Dressler, 1971, էջ 18–19]:

Եվ իրոք, հայերենի խնդրո առարկա կառույցն էլ ունի նույն պատկերը: Օր. **Տեսեալ աւրիմանց աստուծոյ, թէ գեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ՝**:

Իսկ սեռականի և նախադաս, և հետադաս լինելը Դրեսլերը բնորոշ է համարում հնդեվրոպական լեզուներին: Այնուամենայնիվ, ներքին վերականգնման հիման վրա գտնում է, որ նախապես սեռականը եղել է հետադաս [Dressler, 1971, էջ 9]: Սա նույնպես տեսնում ենք վերոհիշյալ կառույցում:

Այսպիսով կարող ենք փաստել, որ թեև գոյություն ունեցող հիշյալ տեսությունները որոշակիորեն լույս են սփռում սեռական հոլովով դրված ենթակայով անցյալ դերբայի այս կառույցի ծագման վրա և զերծ չեն ռացիոնալ հատիկից, սակայն դեռ կան հարցեր, որոնք ենթակա են ճշգրտման:

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Սեռական հոլովով դրված ենթակայով կառույցների հնդեվրոպական բնույթի մասին խոսել է դեռևս Վ. Գամբարծումյանը: Տես Գովհաննես Օձնեցի, Երկեր, Բարձրագույնությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Գամբարծումյանի, Երևան, 1999, էջ 16–17:
- ² Ուշագրավ է, որ Շմալստիգը հետազայում անդրադառնալով այս խնդրին նշում է, որ հավանաբար է ժխտել իր նախկին կարծիքը տվյալ կառույցի հնդեվրոպական ծագման վերաբերյալ առաջին հերթին այն պատճառով, որ հին հնդկերենում բացակայում են անանցողական բայերով սեռական հոլովով կառույցները [Шмалыстиг, 1989, էջ 130]:
- ³ Օրինակը վերցրել ենք Մ. Սինասյանի հոդվածից [Minassian, 1980, էջ 84]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբրիելյան Յու. Ա., Հնդեվրոպական լեզուներում հոլովական ձևերի զարգացման խնդիրը, ԲԵՅ, 3, 2005:
2. Դազարյան Ա. Պ., Դայրդ գրական լեզվի պատմություն, Եր., 1961:
3. Օձնեցի Գովհ., Երկեր, Առաջաբանը և ծանոթագրությունները Վազգեն Գամբարծումյանի, Եր., 1999, էջ 16–17:
4. Сахокия М. М., Посессивные конструкции и эргативность древнеармянского языка в свете проблем синтаксической типологии, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի գեկույցումներ, Երևան, 1984:
5. Туманян Э. Г., Существует ли эргатив в индоевропейских языках ? "Proceedings of the eleventh international congress of linguistics. Bologna – Florence, 2, 1972"
6. Шмалыстиг У.Р., Сахокия М.М., Посессивность, переходность и эргативность. типологическое сопоставление древнеперсидских, древнеармянских и древнегрузинских конструкций, Тбилиси, 1985, 224 с., БЯ, 1989, 3.

- 7 Benveniste E., La construction passive du verbe transitif, BSL, 48, 1952.
- 8 Deeters G., Armenisch und Südkaukasisch. Ein Beitrag zur Frage der Sprachmischung, Leipzig, 1927.
- 9 Dressler W., Über die Rekonstruktion der indogermanischen Syntax "Zeitschrift für vergleichende Sprachforschung", Bd 85, 1 Heft, 1971.
- 10 Lohmann J., Ist das idg. Perfektum nominalen Ursprungs? KZ, 64, 1937.
- 11 Lyonnet St., Le parfait en arménien classique, Paris, 1933.
- 12 Maries L., Sur la formation de l'aoriste et des subjonctifs en -e- (-B-) en arménien, R.F.A. 1930, 1 X, fasc. 2.
- 13 Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1903.
- 14 Minassian M., Emplois du participe en - EAL en arménien classique, Annual of Armenian Linguistics, vol. 1, 1980.
- 15 Schmalstieg W. R., A syntactic comparison of old Armenian and Lithuanian. The case of the passive participles, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի գեկուցումներ, Երևան, 1984.
- 16 Stempel R., Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt am Main, Bern, New-York, 1983.
- 17 Trost K., Die Perfektsphäre im Altkirchenslavischen und Altarmenischen – Ein Beitrag zur vergleichenden Syntax, IF, 73 Band, 1968, Heft 1–2.
- 18 Weitenberg J., Infinitive and participle in Armenian, AAL, vol 7, 1986.

А. Газарян

ПРОБЛЕМА ПРОИСХОЖДЕНИЯ КОНСТРУКЦИИ ПРИЧАСТИЯ В РОДИТЕЛЬНОМ ПАДЕЖЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА В ЛИНГВИСТИКЕ

Статья посвящена проблеме происхождения причастия в родительном падеже в древнеармянском языке в лингвистике. О происхождении и природе этого падежа в древнеармянском существовали разные теории. Еще А.Мейе считал причастие отглагольным именем. Другие лингвисты, как, например, Г. Деетерс, Э. Туманян, У. Шмальstieg, М. Сахokia полагали, что эта конструкция была эргативной. Существовали также теории, согласно которым, она произошла из эквивалента перифразы глагола *иметь* (Й. Ломан и Э. Бенвенист), из семантики перфекта (К. Трост) либо из первичного пассива (Р. Штемפל, Й. Вайтенберг). А по мнению С. Газаряна, эта конструкция является образованием более позднего периода развития древнеармянского.

У всех этих теорий есть определенное рациональное зерно, однако, по нашему мнению, некоторые вопросы не были освещены должным образом.

А. Газарян

THE PROBLEM OF THE GENESIS THE OF CONSTRUCTION THE OF PARTICIPLE IN GENITIVE OF OLD ARMENIAN IN LINGUISTICS

The article is about the problem of the genesis of the construction of the participle in genitive of Old Armenian in Linguistics

In this article is made an attempt to review all the theories of the genesis of the mentioned construction. Still A. Meillet considered this structure as a verbal noun. Other linguists as G. Deeters, E. Tumanian, W. Schmalstieg and M. Saxokia thought that it was an ergative construction. According to other opinions this construction has been resulted from the equivalent of the periphrasis with the verb "have" (J. Lohmann, E. Benveniste), from the semantics of the Perfect (K. Trost), from the primary Passive (R. Stempel, J. Weitenberg). In S. Ghasarjan's opinion this construction was an element of the later period of the development of Armenian language. All these theories have some rational core, though they do not answer duly all the questions.